



#### 79. ՄԱՐԹՆ ՈՒ ԿՆԻԿԸ

Մի մարթ ու կնիկ են ըլլում: Դրանք շատ սերով, խելոք ու համեստ են ըլլում: Էդ մարթը տենում ա, որ շիմն էլ իրանց կնանոնցը ծածորմ են, կովում են, հմա դրանք տհե սերով են:

Գալիս ա կնգանն ասում.— Կնիկ ջան, մենք էս ինչքան լավ մարթ ու կնիկ ենք, որ ուրըշնուն տենում եմ, սիրտըս խառնում ա:

Ասում ա.— Մարթ ջան, կնիկը որ դեշ ըլի՝ մարթն էլ գեշ կլի:

Ասում սի.— Չէ՛, այ կնիկ, դեշութինը մարթիցն ա, մարթը որ գեշ ըլի, կնիկն էլ գեշ կլի:

Նա ասում ա.— Մարթիցն ա, մարթը ասում ա՝ կնգանից ա: Վերը կնիկն ասում ա.— Այ մարթ, խու էսքան մենք իրար հետ սերով ենք, հմա ես որ գեշութինն ուզենամ, կարող ա էջուց էվետ ուրըշի սիրեմ, քեզ գովացնեմ՝ շուերն ընգնիս:

Ասում ա.— Կարալ չես, սիրտ չես անիլ:

Ասում ա.— Լա՛վ:

Դրանք ունենում են մի շալ կով, մարթն էլ լավ շերքեզի հագուստ ա ունենում, սապոքնի, փափախ:

Էդ կնիկը գնում ա մի սիրեկան ա բռնում, ասում ա.— Կգնաս իմ մարթի շորերի նման շորեր կարիլ կտաս, սապոք, փափախ կարիլ կտաս, մի հատ էլ մեր շալ կովի նման կով կառնիս:

Էդ բոլորը դրան պատրաստիլ ա տալի, ինքը գնում ա ղասաքի

կուշտը, ասըմ ա.— Իմ կովը մարթիս ճետ ղրգըմ եմ, 300 մանե-  
թով կբարըշես, կովը վեր կունիս, մարթիս փողը կտաս, կղրգես:  
Ասըմ ա.— Լա՛վ:

Հմի էլ գնըմ ա սապոթնըկի կուշտը, ասըմ ա.— Իմ ոտով մի  
ջուխտ ոտնաման կարե, մարթըս կգա, փողը կտա, կբերե:

Ասըմ ա.— Լա՛վ:

Հըմի էլ գնըմ ա գերցակի կուշտը, մի կաստում ա ղակազ տա-  
լի, ասըմ ա.— Մարթս կգա, փողը կտա, կբերի:

Հմի էլ գնըմ ա սհաթ շինողի կուշտը, մի սհաթ ա ղակազ  
տալի, ասըմ ա.— Մարթս կգա, փողը կտա, կոբրե:

Ասըմ են.— Լա՛վ:

Գալիս ա տուն, սիրեկանին ասըմ ա.— Տար կովըգ տուր ֆլան ղա-  
սարին, փողը կտա՝ ես բարըշել եմ, դու բան չի խոսաս: Կտանիս  
հարիր մանեթ կտաս սապոթնըկին, մի ջուխտ ոտնաման կտա,  
կբերես: Ֆլան գերցակի կուշտը կգնաս, հարիր մանեթ էլ նրան  
կտաս, կաստումը կտա, կբերես: Սհաթ շինողին էլ հարիր մանեթ  
կտաս, սհաթ եմ ղակազ տվել, կտա՝ կբերես:

Ասըմ ա.— Լա՛վ:

Եղնա իրա մարթին էլ ա նույն բաները պատվիրըմ: Սիրեկա-  
նը մի քսան ոտն աղաք ա ընգնըմ, կովը տանըմ, մարթն էլ իրա  
կովն ա տանըմ: Էդ մարթը տենըմ ա, որ իրա նման մի մարթ, իրա  
կովի նման մի կով աղաք արած՝ տանըմ ա:

Ասըմ ա.— Այ մարթ, թե ասեմ՝ նա ես եմ, բա ե՞ս ով եմ:

Էդ մարթը մխելի միտկն ա անըմ, ասըմ ա.— Հլա գնամ, թե  
էս մարթն էլ կովը տարավ իմ կնդա բարըշած ղասարի կուշտը,  
ուրեմը նա ես եմ, ես՝ ով ա դիզըմ ով եմ, թե ուրիշ տեղ կտանի,  
ուրեմը ես՝ ես եմ, նրա հերն էլ անիծած:

Գնըմ են հասնըմ, սիրեկանը կովը տանըմ ա ղասարին աալի,  
ասըմ ա.— Իմ կնիկը կովը ղրգել ա, փողը տվեք:

Նրանք անխոսալ փողը տալիս են:

Էդ մարթը մտկըմն ասըմ ա.— Ուրեմը նա ես եմ, ես, ով ա  
դիզըմ, ով եմ, իմ հերն էլ անիծած:

Ինքն էլ հլե նհե կովը բրախըմ ա, էդ մարթի եղնա գնըմ  
ասըմ ա.— Հլա տենամ, թե հաստատ գնաց սապոթնըկիցն էլ ոտ-  
նաման վերցրուց, ուրեմը նա՝ ես եմ:

Սիրեկանը գնըմ ա սապոթնըկի կուշտը, հարիր մանեթը տա-  
լի, ոտնամանը վեր ունըմ, գնըմ:

Դա ասըմ ա.— Ուրեմը, նա ես եմ:



Տհենց էլ դնում ա կաստումն ու ս'աթն առնում, էդ մարթն ավելի համոզվում ա, որ նա՝ ինքն ա, ինքը՝ հեշ: Հմա եդ եղնեն ա ընգնում, գնում ա, ասում ա՝ բալքի մեր տուն չի գնում, հլա գնամ: Գնում ա թուշ իրանց տուն:

Կնիկը դուս ա գալի, սիրեկանի ճտովն ընկնում, ասում ա.— Մարթ շան, ղակազ տվածնիս լավն ե՞ն, բերի՞ր, աչող անց կացա՞վ:

Ասում ա.— Հա՛ կնիկ ջան, լավն են:

էս մարթը որ էս էլ տեհավ, ավելի համոզվեց, որ նա՝ ինքն ա, ինքն, ով ա գիղըմ, ո՞վ ա: էլ ըմանչում ա իրա տուն գնա, ասում ա.— Գնամ՝ վայ թե տանից դուս անեն, ասեն՝ ո՞վ ա էս ղարիբ մարթը, լավն էն ա՝ մի տեղով գնամ:

Դա գլուխն առնում ա, ըտիան հեռանում: Մութը վրա ա հասնում, հմի էդ մարթը դիդե ոչ, թե ո՞ւր գնա, ի՞նչ անե, մնացել ա մոլորված:

Ասում ա.— Հլա գնամ նրանց ասեմ, բալի էս քշեր տեղ տանքնելու:

Գնում ա դուռը ծեծում, կնիկը դուս ա գալի:

Ասում ա.— Քույրիկ, էս քշեր տեղ չեք տա՞լ, ղարիբ մարթ եմ:

Ասում ա.— Համեցեք, ղոնախն աստծունն ա:

էդ մարթը տուն ա դնում, տենում ա՝ չիմ իրան տեհածին, իրա առածնին, իրա տունը: Եդ մտկըմն ասում ա.— Հլբաթ ինձ թվում ս, ով ա գիղըմ ես կամ, թե՛ չէ:

Կնիկը բերում ա մի շուլ ա տալի՝ տակն ա գցում, մինն էլ վրեն ա գցում, դեղնի վրա քնում: Հմա քունը ե՞փ կտանի: Կնիկը որ սիրեկանի հետ տեղն ա մտնում, դա ըմանչում ա, էրեսը շուռ ա տալի, շուլը գլուխը քաշում, քնում: Կնիկը որ տենում ա դա քնեց հա, դալիս ա շորերը վեր ունում, բերում հին շորերը կոխկին դնում:

Ըռավոդը էդ մարթը զարթնում ա, տենում ա, որ հին շորեր են կշտին, ջլիղ համոզվում ա, որ ինքը մի ղարիբ մարթ ա, վեր ա կենում ու հեռանում: Դա գժվածի պես գնում ա, թե ո՞ւր՝ ինքն էլ չգիդե: Ընգնում ա շուրերը, գնում ա մի շորանի ոաստ գալի: Չորանի շները դրան վրա են տալի, որ տենում ա կծիլ տին, փետով տալիս ս մնի գլխին: Չորանի ջիղոր գալիս ա, դրան մի լավ ծեծում ա, ասում ա.— Տո հայվան, շորանի շանը կծեծե՞ն:

Որ շատ ծեծում են, մեխկներուն գալիս ա, բրախում են, ասում են.— Դվորն էկել ես, դենն էլ գնա:

Դա ծեծված, ջարթված, յարալու եդ գալիս ա իրա դուռը:

Կնիկը որ տենում ա՛ մեխկը գալիս ա, տանում ա տուն. յարա-  
լու տեղերը փթաթում, տեղումը խտոր գծում, ասում ա.— Ո՞նց ես,  
ի՞նչդ ա ցավում:

Ասում ա.— Գիդեմ ոչ, գլուխս ա ցավում, մի բան էլա հսկա-  
նում չեմ:

Նոր կնիկն ասում ա.— Դու իմ մարթն ես, սա իմ սիրեկանն ա,  
հմի տենում ե՞ս, որ կնիկն ինչ ուզենա՛ կանե:

Համա լավութիւնը համ կնգանից պտի ըլիլ, համ մարթից,  
էրկուսն էլ իրար պտին սիրիլ ու հարգիլ, որ ընտանիքն էլ կարքին  
ըլի. քօ շէ— որ դու քու էջը քշես, ես էլ իմ էջը քշեմ, էս օրին  
կընգնինք: Ով անխելք ա, նրա տունը կռիվ էլ կլի, ծեծ էլ, մարթ  
ջա՛ն, արի սրանից եդը իմ ասածը դու լսե, քու ասածը՝ ես:

